25341

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԿՊ 35

Ք. Երևան 28.11.2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության ղեկավարի կողմից լիազորված անձ Լևոն Կարապետյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 9-ի «ԵՔ-ԴՄ-ԺՔՄ-08/22 ծածկագրով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի որոշումը հաստատելու մասին» N 2051-Ա/2 հրամանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 2200-Ա/2 հրամանը՝ «Երիտասարդները հանուն բովանդակալի մասնակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն Պայմանագրի Հավելված N 2-ում ներկայացված ֆինանսական նախահաշվի, Կազմակերպությանը հատկացնել 3,988.8 հազար (երեք միլիոն ինը հարյուր ութսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշումներով և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի

Հավելված N 1-ում, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը՝ Հավելված N 5-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշումներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. ավարտված Միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել՝ Պետական մարմին 7.3 կետով սահմանված ժամկետում, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը Հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կկազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարը Կազմակերպությանն է հատկացվում համաձայն վճարման ժամանակացույցի (Հավելված N 3):

5.2. Սահմանված գումարի 80%-ը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4) ստորագրելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Պետական մարմինը կարող է սույն կետով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկել և հաշվանցել Կատարողին վճարվելիք գումարներից:

6.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պայմանագրի գործողության, հաշվետվությունների ներկայացման ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի նոյեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

7.3.Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.4. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 15-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության Պետական մարմնի կողմից սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածներով հաստատվում են, համապատասխանաբար, Ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, վճարման ժամանակացույցը, հանձնման-ընդունման ակտը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պետական մարմինը միակողմանիորեն լուծում է

Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www,escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինը այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

ՀՕ. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Կառավարական 2-րդ շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032472 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ Գագիկ Սաֆարյան /ստորագրություն/ Կ.Տ.	«Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական հասարակական կազմակերպություն ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ Շիրակի 6/6 բանկ՝ ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ Հ/Հ220183350010000 ՀՎՀՀ 03313535 Լիազորված անձ՝ Լևոն Կարապետյան /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 2
2022թ. Դեկտեմբերի 29-ին
կնքված N ԱՄՀ 35 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ
Ծրագրի անուն «Երիտասարդները հանուն բովանդակալի մասնակցության»
Ծրագրի տևողություն 10/11/2022-10/12/2022

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)
Ա	Աշխատավարձ				
1.1	Ծրագրի ղեկավար	մարդ	1	132000	132000
1.2	Ծրագրի ղեկավարի օգնական	մարդ	1	100000	100000
1.3	Հաշվապահ	մարդ	1	90000	90000
1.4	Փորձագետ	մարդ	2	150000	300000
1.5	Ֆասիլիտատոր	մարդ	1	132000	132000
	Ընդամենը Ա				*754000*
Բ	Ծրագրային ծախսեր				
2.1	Կեցություն (30 մասնակցի և ծրագրի 5 կազմակերպչի 4-օրյա կեցություն)	մարդ/օր	35/4	15000	2100000
2.2	Տրանսպորտային ծառայություն (30 մասնակցի և ծրագրի 5 կազմակերպչի համար(Երևան-Աղվերան-Երևան)	ուղերթ	2	70000	140000
2.3	Տրանսպորտային ծառայություն (Ֆորումի 20 մասնակցի և 3 բանախոսի համար (Երևան-Աղվերան-Երևան)	ուղերթ	2	50000	100000
2.4	Պոստքարդի տպագրություն	հատ	240	300	72000
2.5	Սուրճի ընդմիջում (Ֆորումի 20 մասնակցի և 3 բանախոսի համար՝ 2 անգամ)	մարդ/օր	23/2	1500	69000
2.6	Սնունդ (Ֆորումի 20 մասնակցի և 3 բանախոսի համար)	մարդ	23	3000	69000
2.7	Բաների տպագրություն	հատ	1	20000	20000
	Ընդամենը Բ				*2570000*
Ընդամենը					3324000
ԱԱՀ					664800
ԸՆԴԱՄԵՆԸ					3988800

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Մաֆյարյան

ստորագրություն
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական
հասարակական կազմակերպություն
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ Շիրակի 6/6
բանկ՝ ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ
մասնաճյուղի հասցեն՝ Եղվարդի մասնաճյուղ
Հ/Հ220183350010000
ՎՀՀ 02313935
Լիազորված անձ՝
Լիանա Կարապետյան

ստորագրություն

Հավելված 1
2022 թ. Հոկտեմբերի 29 ին
կնքված N 4/35 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կազմակերպություն՝ «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ
Ծրագիր՝«Երիտասարդները հանուն բովանդակալի մասնակցության»
Տևողություն՝ 10/11/2022-10/12/2022

NN	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման անվանումը	Նկարագիրը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	Քառօրյա դասընթաց, ֆորում	Նախատեսվում է Հայաստանի բոլոր մարզերից թվով 50 երիտասարդների համար կազմակերպել և անցկացնել քառօրյա դասընթաց, ֆորում ժողովրդավարության,	Դասընթացի, ֆորումի իրականացում, կազմակերպչական, տեխնիկական և տեսական հարցերի կազմակերպում, համակարգում, լուսաբանում, գնահատում	Ակնկալվող արդյունքներ. ➢ Զարգացել է ՀՀ բոլոր մարզերի 30 երիտասարդների տեղական և ազգային մակարդակում քաղաքական և քաղաքացիական մասնակցության կարողությունները: ➢ Բարձրացել է ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդերի իրազեկության մակարդակը	05/12/2022	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն 15/12/2022	3324000

			Ղեկավարության կազմակերպումը, ղեկավարության ձևերը և մեթոդները, վերահսկողությունը և գնահատումը: Ղեկավարության գործառույթները: Ղեկավարության գործընթացի էությունը: Ղեկավարության գիտությունը: Ղեկավարության գիտության առարկան, խնդիրները և մեթոդները: Ղեկավարության գիտության կապը մյուս գիտությունների հետ: Ղեկավարության գիտության զարգացումը: Ղեկավարության գիտության ուսումնասիրության մեթոդները: Ղեկավարության գիտության գործառույթները: Ղեկավարության գիտության սկզբունքները: Ղեկավարության գիտության մեթոդաբանությունը

				տեղեկատվական անվտանգություն թեմաներով: Գնահատման չափանիշներ. Վերը նշված ակնկալվող արդյունքների գնահատման չափանիշներն են. ➢ Առցանց գնահատման թերթիկներ(դասընթաթի մեկնարկից և ավարտից հետո մասնակիցներին գնահատման թերթիկներ կտրամադրվեն՝ գիտելիքների ստուգման դասընթացի արդյունավետության վերաբերյալ) ➢ Ծրագրի ընթացքին, նպատակի բավարարմանը և արդյունքների արձանագրմանն ուղղված գնահատում հատուկ մեթոդաբանությամբ ➢ Դասընթացի, ֆորումի ընթացքում արված լուսանկարներ, ուղիղ հեռարձակում սոցիալական մեդիայում ➢ դասընթացի, ֆորումի մասին սոցիալական մեդիայում հրապարակված նյութ:			

				➢ *Տպագրված պոստքարդերի օրինակներ:*			
2.	Համայնքային միջոցառումներ	Դասընթացի և ֆորումի ընթացքում քննարկումների արդյունքներով մշակելու են գաղափարներ, որոնք կիրագործեն ծրագրի ավարտից հետո իրենց համայնքներ վերադառնալուն պես՝ որպես սույն ծրագրի շարունակականություն՝ այսպիսով բազմապատկելով ծրագրի շահառուների շրջանակը:Միջոցառումների	Ծրագրի ղեկավար կազմի և փորձագիտական թիմի կողմից մասնակիցներին ուղղորդում և համակարգում,միջոցառումներիլուսաբանում, գնահատում	Ակնկալվող արդյունք. *Բարձրացել է << բոլոր մարզերից մի շարք համայնքների երիտասարդների իրազեկության մակարդակը մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ:* *Գնահատման չափանիշներն են.*	10/12/2022	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն 15/12/2022	0

		Ժամանակ նաև մասնակիցները կտարածեն դասընթացի ընթացքում մշակված պոստքարդերը:		• *Ամփոփ տեղեկատվություն իրականացված համայնքային միջոցառումների մասին:* • *Սոցիալական մեդիայում հրապարակված նյութեր, լուսանկարներ, հոլովակներ* • *Տպագրված, տարածված պոստքարդերի օրինակներ:*			
Ընդամենը							3324000
ԱԱՀ							664800
ԸՆԴԱՄԵՆԸ							3988800

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝ Գագիկ Սաֆարյան
_____/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ Շիրակի 6/6
բանկ՝ ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ
մասնաճյուղի հասցեն՝ Եղվարդի մասնաճյուղ
Հ/Հ220183350010000
ՀՎՀՀ 03313535
Կազմակերպության ղեկավար՝ Լևոն Կարապետյան
_____/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
2022թ. հունվարի 29-ին
կնքված N 35 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ

Հազ. դրամ

«1115. Երիտասարդության ծրագիր» «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ»
«Երիտասարդները հանուն բովանդակալի մասնակցության» ծրագրի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
«ԵՔ-ԴՄ- /22»	99999999/	–	–	–	–	-	-	-	-	-	-	3191.0	3988.8	3988.8

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչությունՀ/Հ 900011032472
ՀԿՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական հասարակական կազմակերպություն
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ Շիրակի 6/6
բանկ՝ ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ
մասնաճյուղի հասցեն՝ Երևան, Մաշտոցյան
Հ/Հ 22008335010000
ՀՎՀՀ 03313535
Նախագահ՝
Լևոն Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 4
2022 թ. Հոկտեմբեր 29-ին
կնքված N 2/35 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված --- -- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ՝ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ	

Հավելված N5
2022 թ. Հունվարի 28-ին
կնքված N 4735 կայմանագրի

«Երիտասարդները հանուն բովանդակալի մասնակցության» ծրագիր

Համառոտագիր

Վերջին տարիներին համաշխարհային մակարդակով նկատվում և արձանագրվում են ժողովրդավարական ընթացակարգերի գործառնության հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Աշխարհի տարբեր երկրներում ժողովրդավարության մակարդակը գնահատող միջազգային առաջատար կազմակերպությունների զեկույցները փաստում են, որ իրականում գործ ունենք ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետության ճգնաժամի հետ: Հայաստանում ևս արձանագրվում են ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետության հետ կապված խնդիրներ, խորացել է քաղաքական ինստիտուտների գործառնության նկատմամբ հասարակության անվստահությունը, որի մտահոգիչ ցուցիչը թե համապետական և թե տեղական մակարդակներում անցկացված ընտրական գործընթացներին հասարակության խիստ պասիվ մասնակցությունն է: Ընդ որում, հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցությունից խուսափելու միտումներն ավելի նկատելի են հատկապես երիտասարդության շրջանում, ինչը խիստ ծայրահեղ հետևանքներ կարող է ունենալ՝ հաշվի առնելով, որ Հայաստանի գլխավոր ռեսուրսը մարդկային կապիտալն է ի դեմս երիտասարդության: Հանրային համերաշխությունը խաթարող լրջագույն մարտահրավեր է դարձել նաև տեղեկատվական դաշտում ապատեղեկատվության հսկայական ծավալներով շրջանառությունը, առցանց և անցանց ռեժիմում ատելության խոսքը, անհանդուրժողականության մթնոլորտը: Արձանագրվող այս բոլոր միտումները առարկայական սպառնալիքներ են Հայաստանի ժողովրդավարական ապագայի համար, հետևաբար անհրաժեշտ է այս մարտահրավերների չեզոքացմանն ուղղված թիրախային մոտեցումների գործադրում:

Հաշվի առնելով-վերը թվարկված խնդիրների շրջանակը՝ առաջարկվող ծրագրային հայտը նախատեսում է Հայաստանի բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների համար կազմակերպել և անցկացնել 4 օրյա դասընթաց: Դասընթացի շրջանակներում երիտասարդները հնարավորություն կունենան ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդաբանության հիմքով մշակված ծրագրի միջոցով ձեռք բերել նոր և խորացված գիտելիքներ ժողովրդավարական ընթացակարգերի գործառնության արդյունավետության ցուցիչների, ժողովրդավարությանը սպառնացող բացասական միտումների և դրանց չեզոքացման, քաղաքական արդյունավետ հաղորդակցության, տեղական մակարդակում ժողովրդավարական և տեղական ինքնակառավարման մեխանիզմների գործարկման, տեղական ինքնակառավարմանը մասնակցության մեխանիզմների, ՏԻՄ-երիտասարդություն ակտիվ համագործակցության, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման, բովանդակալից մասնակցության հայեցակարգի (meaningful participation) և խոցելի խմբերի ներգրավվածության ապահովման, ինչպես նաև մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ: Դասընթացի ավարտից հետո նախատեսվում է անցկացնել մեկ օրյա ֆորում, որտեղ հատուկ բանախոսների մասնակցությամբ պանելային երեք ուղղություններով (ժողովրդավարություն՝ ազգային և տեղական մակարդակներ, երիտասարդական քաղաքականություն և երիտասարդների բովանդակալից մասնակցություն, մեդիագրագիտություն և տեղեկատվական անվտանգություն) ծրագրի մասնակից 30 երիտասարդները, ինչպես նաև հատուկ ֆորումի համար գրանցված շուրջ 20 երիտասարդները (այսպիսով ֆորումին կմասնակցի ընդհանուր առմամբ 50 երիտասարդ) հնարավորություն կունենան խորացված ոլորտային քննարկումների միջոցով իրականացնել փորձի փոխանակում, կատարելագործել իրենց հմտությունները, ինչպես նաև այդ քննարկումների արդյունքներով մշակել գաղափարներ, որոնք կիրագործեն ծրագրի ավարտից հետո իրենց համայնքներ վերադառնալուն պես՝ որպես սույն ծրագրի շարունակականություն՝ այսպիսով բազմապատկելով ծրագրի շահառուների շրջանակը: Գաղափարների քննարկման արդյունքում երիտասարդները կմշակեն նաև տեղեկավական անվտանգության և

մեդիագրագիտության թեմաներով կոչերով, կարգախոսներով պոստքարդեր, որոնք կտարածվեն մասնակից երիտասարդների համայնքներում և մարզերում, այս կերպ գաղափարի շուրջ ներգրավելով մեծ թվով երիտասարդների:

Ծրագրի նկարագրություն

Վերջին տարիներին համաշխարհային մակարդակով նկատվում և արձանագրվում են ժողովրդավարական ընթացակարգերի գործառնության հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Աշխարհի տարբեր երկրներում ժողովրդավարության մակարդակը գնահատող միջազգային առաջատար կազմակերպությունների զեկույցները փաստում են, որ իրականում գործ ունենք ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետության ճգնաժամի հետ: Ընդ որում, այս խնդրին առնչվում են ինչպես արևմտյան կոնսոլիդացված ժողովրդավարական քաղաքական համակարգերը, այնպես էլ ժողովրդավարության կայացման առումով դեռևս անցումային փուլում գտնվող քաղաքական համակարգերը: Ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետության ճգնաժամը գլխավորապես վերաբերվում է ժողովրդավարության ներկայացուցչականության կոմպոնենտին: Առարկայական առումով ներկայացուցչականության ճգնաժամը դրսևորվում է քաղաքականության մեջ պոպուլիստական ուղղության բացասական ազդեցության ուժգնացմամբ, քաղաքական համակարգի և հասարակության միջև հաղորդակցության ուղիների խաթարմամբ, քաղաքական իշխանության լեգիտիմության հիմքերի վերանայման անհրաժեշտության, քաղաքական համակարգի ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության կտրուկ անկման, քաղաքական, քաղաքացիական և, հատկապես, ընտրական գործընթացներին հասարակության պասիվ մասնակցության, հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ երիտասարդների անտարբերության խորացմամբ, տեղեկատվական հոսքերի անկառավարելիությամբ և դրանցում ահռելի քանակությամբ ապատեղեկատվության շրջանառությամբ:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված Հայաստանը ևս անմասն չէ այս ամենից՝ անմիջապես բախվելով այս մարտահրավերներից շատերին: Հայաստանում ևս արձանագրվում են ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետության հետ կապված խնդիրներ, քաղաքական դաշտում գրեթե բոլոր դերակատարների մոտ դոմինանտ է դառնում քաղաքական պոպուլիզը, խորացել է քաղաքական ինստիտուտների գործառնության նկատմամբ հասարակության անվստահությունը, որի մտահոգիչ ցուցիչը թե համապետական և թե տեղական մակարդակներում անցկացված ընտրական գործընթացներին հասարակության խիստ պասիվ մասնակցությունն է: Ընդ որում, հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցությունից խուսափելու միտումներն ավելի նկատելի են հատկապես երիտասարդության շրջանում, ինչը խիստ ծայրահեղ հետևանքներ կարող է ունենալ՝ հաշվի առնելով, որ Հայաստանի գլխավոր ռեսուրսը մարդկային կապիտալն է ի դեմս երիտասարդության: Քաղաքական դաշտի խիստ բևեռացվածությունը հանգեցրել է հանրության շրջանում վտանգավոր հատվածականության ի հայտ գալուն: Հանրային համերաշխությունը խաթարող լրջագույն մարտահրավեր է դարձել տեղեկատվական դաշտում ապատեղեկատվության հսկայական ծավալներով շրջանառությունը, առցանց և անցանց ռեժիմում ատելության խոսքը, անհանդուրժողականության մթնոլորտը: Ընդ որում, տեղեկատվական բացասական հոսքերի հետ կապված հանրային գրեթե բոլոր շերտերի մոտ նկատվող ոչ գրագետ մոտեցումները լրջագույն սպառնալիք են ստեղծում նաև տեղեկատվական անվտանգության առումով, հատկապես հաշվի առնելով Հայաստանի շուրջը ձևավորված խիստ խոցելի անվտանգային միջավայրը: Արձանագրվող այս բոլոր միտումները առարկայական սպառնալիքներ են Հայաստանի ժողովրդավարական ապագայի համար, հետևաբար անհրաժեշտ է այս մարտահրավերների չեզոքացմանն ուղղված թիրախային մոտեցումների գործադրում:

Հաշվի առնելով վերը թվարկված խնդիրների շրջանակը՝ առաջարկվող ծրագրային հայտը նախատեսում է Հայաստանի բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների համար կազմակերպել և անցկացնել 4 օրյա դասընթաց: Դասընթացի շրջանակներում երիտասարդները հնարավորություն կունենան ֆորմալ և ոչ ֆորմալ

մեթոդաբանության հիմքով մշակված ծրագրի միջոցով ձեռք բերել նոր և խորացված գիտելիքներ ժողովրդավարական ընթացակարգերի գործառնության արդյունավետության ցուցիչների, ժողովրդավարությանը սպառնացող բացասական միտումների և դրանց չեզոքացման (պոպուլիզմ, նպատակադրված քաղաքական և քաղաքացիական բևեռեցվածություն), քաղաքական արդյունավետ հաղորդակցության, տեղական մակարդակում ժողովրդավարական և տեղական ինքնակառավարման մեխանիզմների գործարկման, տեղական ինքնակառավարմանը մասնակցության մեխանիզմների, ՏԻՄ-երիտասարդություն ակտիվ համագործակցության, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման, բովանդակալից մասնակցության հայեցակարգի (meaningful participation) և խոցելի խմբերի ներգրավվածության ապահովման, ինչպես նաև մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ: Դասընթացի արդյունքում երիտասարդները կզարգացնեն և կկատարելագործեն քաղաքական և քաղաքացիական մասնակցային կարողությունները թե տեղական և թե ազգային մակարդակում, կտիրապետեն իրենց կենսագործունեության վրա ազդող որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և դրանց վրա ազդելու հմտություններին, կկարողանան հստակորեն վերլուծել տեղեկատվական հոսքերը, տարբերակել և նույնականացնել ապատեղեկատվությունը, կծանոթանան ապատեղեկատվության և վնասակար բնույթի տեղեկատվության բացահայտման և չեզոքացման գործիքներին, ատելության խոսքի դեմ պայքարի մեթոդաբանությանը և գործիքակազմին, առցանց հարթակում փաստարկված և կառուցողական բանավեճ, երկխոսություն վարելու գործիքակազմին, ինչպես նաև մեդիագրագիտության տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող քննադատական մտածողության, ոչ բռնի հաղորդակցության և լսելու հմտությունների հայեցակարգերին (critical thinking, non-violent communication and active listening): Դասընթացի ավարտից հետո նախատեսվում է անցկացնել մեկ օրյա ֆորում, որտեղ հատուկ բանախոսների մասնակցությամբ պանելային երեք ուղղություններով (ժողովրդավարություն՝ ազգային և տեղական մակարդակներ, երիտասարդական քաղաքականություն և երիտասարդների բովանդակալից մասնակցություն, մեդիագրագիտություն և տեղեկատվական անվտանգություն) ծրագրի մասնակից 30 երիտասարդները, ինչպես նաև հատուկ ֆորումի համար գրանցված շուրջ 20 երիտասարդները (այսպիսով ֆորումին կմասնակցի ընդհանուր առմամբ 50 երիտասարդ) հնարավորություն կունենան խորացված ոլորտային քննարկումների միջոցով իրականացնել փորձի փոխանակում, կատարելագործել՝ իրենց հմտությունները, ինչպես նաև այդ քննարկումների արդյունքներով մշակել գաղափարներ, որոնք կիրագործեն ծրագրի ավարտից հետո իրենց համայնքներ վերադառնալուն պես՝ որպես սույն ծրագրի շարունակականություն՝ այսպիսով բազմապատկելով ծրագրի շահառուների շրջանակը: Գաղափարների քննարկման արդյունքում երիտասարդները կմշակեն նաև տեղեկավական անվտանգության և մեդիագրագիտության թեմաներով կոչերով, կարգախոսներով պոստքարդեր, որոնք կտարածվեն մասնակից երիտասարդների համայնքներում և մարզերում, այս կերպ գաղափարի շուրջ ներգրավելով մեծ թվով երիտասարդների:

Ընդհանուր առմամբ առաջարկվող ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի հիմքում դրված «գիտելիք-կարողություն-դիրքորոշման փոփոխություն» ուսուցանման առաջադիմական մեթոդը ծրագրի մասնակից երիտասարդների մոտ զարգացնելու է մոտեցում առ այն, որ Հայաստանի ժողովրդավարական ապագան կերտում է յուրաքանչյուր երիտասարդ՝ երկրի հասարակական-քաղաքական կյանքին գիտակցված և պատասխանատու մասնակցության, քաղաքական համակարգում իր տեղն ու դերը գիտակցելու և իրացնելու, հանրային համերաշխությունը որպես կայուն զարգացման նախապայման դիտարկելու միջոցով: Այս կերպ ծրագրի ավարտին ակնկալվում է ունենալ 30 պատրաստված երիտասարդներ, ովքեր կարևորելով ժողովրդավարական կայուն զարգացումը գործի են դնում բովանդակալից մասնակցության իրենց հմտությունները, վստահում և համագործակցում են քաղաքական համակարգի ինստիտուտների և դրանց մասը կազմող քաղաքականություն մշակող և իրականացնող կառույցների հետ, ակտիվորեն համագործակցում են իրենց համայնքային իշխանությունների հետ, մասնակցում են տեղական ինքնակառավարմանը, տեղեկատվական հոսքերի մեջ կարողանում են մեդիագրագետ վարքագիծ դրսևորել և սպառել բացառապես ճշտված և օբյեկտիվ տեղեկություններ, ինչպես նաև ունեն ֆունկցիոնալ հմտություններ, թե ինչպես իրենց դրսևորեն տեղեկատվական

դաշտում, երբ խոսքը վերաբերվում է ազգային անվտանգությանը, տեղեկատվական անվտանգությանը և հակահայկական քարոզչությանն հակազդելուն:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ բոլոր մարզերից թվով 50 երիտասարդների (ներառյալ սահմանափակ հնարավորություններով և կարողություններով) քաղաքական և քաղաքացիական բովանդակալի մասնակցության (meaningful participation) բարձրացմանը՝ կապարելագործելով վերջիններիս գիտելիքները և հմտությունները ժողովրդավարական ընթացակարգերի, մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության ոլորտներում:

Խնդիրներն են.

Զարգացնել ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների տեղական և ազգային մակարդակում քաղաքական և քաղաքացիական մասնակցության կարողությունները:

- *Բարձրացնել ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդերի իրազեկության մակարդակը ժողովրդավարության հայեցակարգի, տեղական ինքնակառավարմանը մասնակցության մեխանիզմների, ՏԻՄ-երիտասարդություն ակտիվ համագործակցության, բովանդակալից մասնակցության հայեցակարգերի մասին:*

- *Զարգացնել ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների՝ մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ հմտությունները:*

- *Կատարելագործել ՀՀ բոլոր մարզերից թվով 50 երիտասարդների հմտությունները ժողովրդավարություն՝ ազգային և տեղական մակարդակներ, երիտասարդական քաղաքականություն և երիտասարդների բովանդակալից մասնակցություն, մեդիագրագիտություն և տեղեկատվական անվտանգություն թեմաներով:*

- *Բարձրացնել ՀՀ բոլոր մարզերից մի շարք համայնքների երիտասարդների իրազեկության մակարդակը մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ:*

Արդյունքներն են.

- *Զարգացել է ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների տեղական և ազգային մակարդակում քաղաքական և քաղաքացիական մասնակցության կարողությունները:*

- *Բարձրացել է ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդերի իրազեկության մակարդակը ժողովրդավարության հայեցակարգի, տեղական ինքնակառավարմանը մասնակցության մեխանիզմների, ՏԻՄ-երիտասարդություն ակտիվ համագործակցության, բովանդակալից մասնակցության հայեցակարգերի մասին:*

- *Զարգացել է ՀՀ բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների՝ մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ հմտությունները:*

- *Կատարելագործվել է ՀՀ մարզերից թվով 50 երիտասարդների հմտությունները ժողովրդավարություն՝ ազգային և տեղական մակարդակներ, երիտասարդական քաղաքականություն և երիտասարդների բովանդակալից մասնակցություն, մեդիագրագիտություն և տեղեկատվական անվտանգություն թեմաներով:*

- *Բարձրացել է << բոլոր մարզերից մի շարք համայնքների երիտասարդների իրազեկության մակարդակը մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ:*

Ծրագրի ավարտին ակնկալվում է ունենալ 50 պատրաստված երիտասարդներ, ովքեր կարևորելով ժողովրդավարական կայուն զարգացումը գործի են դնում բովանդակալից մասնակցության իրենց հմտությունները, վստահում և համագործակցում են քաղաքական համակարգի ինստիտուտների և դրանց մասը կազմող քաղաքականություն մշակող և իրականացնող կառույցների հետ, ակտիվորեն համագործակցում են իրենց համայնքային իշխանությունների հետ, մասնակցում են տեղական ինքնակառավարմանը, տեղեկատվական հոսքերի մեջ կարողանում են մեդիագրագետ վարքագիծ դրսևորել և սպառել բացառապես ճշտված և օբյեկտիվ տեղեկություններ, ինչպես նաև ունեն ֆունկցիոնալ հմտություններ, թե ինչպես իրենց դրսևորեն տեղեկատվական դաշտում, երբ խոսքը վերաբերվում է ազգային անվտանգությանը, տեղեկատվական անվտանգությանը և հակահայկական քարոզչությանն հակազդելուն:

Գործողություններ

Հաշվի առնելով վերը թվարկված խնդիրների շրջանակը՝ առաջարկվող ծրագրային հայտը նախատեսում է Հայաստանի բոլոր մարզերից թվով 30 երիտասարդների համար կազմակերպել և անցկացնել 4 օրյա դասընթաց: Դասընթացի շրջանակներում երիտասարդները հնարավորություն կունենան ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդաբանության հիմքով մշակված ծրագրի միջոցով ձեռք բերել նոր և խորացված գիտելիքներ ժողովրդավարական ընթացակարգերի գործառնության արդյունավետության ցուցիչների, ժողովրդավարությանը սպառնացող բացասական միտումների և դրանց չեզոքացման (պոպուլիզմ, նպատակադրված քաղաքական և քաղաքացիական բևեռեցվածություն), քաղաքական արդյունավետ հաղորդակցության, տեղական մակարդակում ժողովրդավարական և տեղական ինքնակառավարման մեխանիզմների գործարկման, տեղական ինքնակառավարմանը մասնակցության մեխանիզմների, ՏԻՄ-երիտասարդություն ակտիվ համագործակցության, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման, բովանդակալից մասնակցության հայեցակարգի (meaningful participation) և խոցելի խմբերի ներգրավվածության ապահովման, ինչպես նաև մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ: Դասընթացի արդյունքում երիտասարդները կզարգացնեն և կկատարելագործեն քաղաքական և քաղաքացիական մասնակցային կարողությունները թե տեղական և թե ազգային մակարդակում, կտիրապետեն իրենց կենսագործունեության վրա ազդող որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և դրանց վրա ազդելու հմտություններին, կկարողանան հստակորեն վերլուծել տեղեկատվական հոսքերը, տարբերակել և նույնականացնել ապատեղեկատվությունը, կծանոթանան ապատեղեկատվության և վնասակար բնույթի տեղեկատվության բացահայտման և չեզոքացման գործիքներին, ատելության խոսքի դեմ պայքարի մեթոդաբանությանը և գործիքակազմին, առցանց հարթակում փաստարկված և կառուցողական բանավեճ, երկխոսություն վարելու գործիքակազմին, ինչպես նաև մեդիագրագիտության տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող քննադատական մտածողության, ոչ բռնի հաղորդակցության և լսելու հմտությունների հայեցակարգերին (critical thinking, non-violent communication and active listening): Դասընթացի ավարտից հետո նախատեսվում է անցկացնել մեկ օրյա ֆորում, որտեղ հատուկ բանախոսների մասնակցությամբ պանելային երեք ուղղություններով (ժողովրդավարություն՝ ազգային և տեղական մակարդակներ, երիտասարդական քաղաքականություն և երիտասարդների բովանդակալից մասնակցություն, մեդիագրագիտություն և տեղեկատվական անվտանգություն) ծրագրի մասնակից 30 երիտասարդները, ինչպես նաև հատուկ ֆորումի համար գրանցված շուրջ 20 երիտասարդները (այսպիսով ֆորումին կմասնակցի ընդհանուր առմամբ 50 երիտասարդ) հնարավորություն կունենան խորացված ոլորտային քննարկումների միջոցով իրականացնել փորձի փոխանակում, կատարելագործել իրենց հմտությունները, ինչպես նաև այդ քննարկումների արդյունքներով մշակել գաղափարներ, որոնք կիրագործեն ծրագրի ավարտից հետո իրենց համայնքներ վերադառնալուն պես՝ որպես սույն ծրագրի շարունակականություն՝ այսպիսով բազմապատկելով ծրագրի շահառուների շրջանակը: Գաղափարների քննարկման արդյունքում երիտասարդները կմշակեն նաև տեղեկավական անվտանգության և

մեդիագրագիտության թեմաներով կոչերով, կարգախոսներով պոստքարդեր, որոնք կտարածվեն մասնակից երիտասարդների համայնքներում և մարզերում, այս կերպ գաղափարի շուրջ ներգրավելով մեծ թվով երիտասարդների:

Ծրագրի ընթացքում մշտապես նախատեսվում է իրականացնել լուսաբանմանն ու գնահատմանն ուղղված աշխատանքներ: Ծրագրի լուսաբանումը կիրականացվի կազմակերպության սոցիալական էջերի միջոցով՝ տեղադրելով ծրագրի մանրամասների մասին լուսանկարներ, հոլովակներ, հոդվածներ և այլն: Գնահատումը կիրականացվի ծրագրի յուրաքանչյուր փուլում, այդ կերպ գնահատելով թե մասնակիցների կարողությունների զարգացման մակարդակը, թե աշխատակազմի կողմից կատարված աշխատանքը:

Ծրագիրը կամփոփվի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների մշակմամբ, պատրաստմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ
Ծրագիր *«Երիտասարդները հանուն բովանդակալի մասնակցության»*
Ժամանակահատված *10/11/2022-10/12/2022*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս										
			1	2	3	4	5	6	7	8	9	10	
1	Նախապատրաստական աշխատանքներ/ծրագրի մասին տեղեկատվության տարածում, դասընթացի մասնակցության հայտի մշակում, տարածում	Ծրագրի ղեկավար											
2	Հանդիպում փորձագետների հետ՝ դասընթացի օրակարգի, մեթոդների հստակեցում	Ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետներ											
3	Դասընթացի, ֆորումի կեցության, սնունդի, գրենական պիտույքների, ուղևորափոխադրման պայմանավորվածության ձեռք բերում	Ծրագրի համակարգող											
4	Բաների դիզայնի մշակում, տպագրում	Ծրագրի համակարգող											

5	Ֆորումի բանախոսների հետ պայմանավորվածության ձեռք բերում	Ծրագրի ղեկավար												
6	Մասնակիցների ընտրություն	Ծրագրի ղեկավար, համակարգող												
7	Դասընթացի, ֆորումի իրականացում	Ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետներ												
8	Պոստքարդի մշակում, տպագրում	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, մասնակիցներ												
9	Համայնքային միջոցառումների իրականացում	Մասնակիցներ												
10	Ծրագրի լուսաբանում	Ծրագրի ղեկավար, համակարգող												
11	Ծրագրի գնահատում	Ծրագրի ղեկավար, համակարգող												
12	Ծրագրի ամփոփում, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	Ծրագրի ղեկավար, հաշվապահ												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներն են << մարզերից 18-30 տարեկան երիտասարդներ՝ ներառյալ սահմանափակ հնարավորություններ ունեցող երիտասարդներ, ՏԻՄ աշխատակիցներ, ավագանու անդամներ, ՏԻՄ խորհրդի անդամներ, այն երիտասարդները, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում իրենց համայնքներում, անդամակցում են որևէ հասարակական կազմակերպության, կրթական, սոցիալական կամ մշակութային կառույցների, հետաքրքրված են համայնքային խնդիրների լուծման, տեղական իշխանությունների հետ

համագործակցության հարցերով, համայնքային զարգացման ծրագրերով: Մասնակիցների ընտրության ժամանակ հաշվի կառնվի մասնագիտությունը, փորձառությունը և ծրագրում հնարավոր ներդրում ունենալու դերը: Ծրագրի դասընթացին կմասնակցեն ՀՀ մարզերից 18-30 տարեկան թվով 30 երիտասարդներ, դասընթացին հաջորդող ֆորումին մասնակցություն կունենան ևս 20 երիտասարդ: Երիտասարդները մասնակցություն են ունենալու կարողությունների զարգացման դասընթացին, ֆորումին և իրենց նախաձեռնությամբ կազմակերպված համայնքային միջոցառումներին, որին ներգրավելու են ավելի մեծ թվով տեղի երիտասարդների: Այսպիսով՝ ֆորումին կմասնակցի ընդհանուր առմամբ 50 երիտասարդ, որոնք հնարավորություն կունենան խորացված ոլորտային քննարկումների միջոցով իրականացնել փորձի փոխանակում, կատարելագործել իրենց հմտությունները, ինչպես նաև այդ քննարկումների արդյունքներով մշակել գաղափարներ, որոնք կիրագործեն ծրագրի ավարտից հետո իրենց համայնքներ վերադառնալուն պես՝ որպես սույն ծրագրի շարունակականություն՝ այսպիսով բազմապատկելով ծրագրի շահառուների շրջանակը: Գաղափարների քննարկման արդյունքում երիտասարդները կմշակեն նաև տեղեկավական անվտանգության և մեդիագրագիտության թեմաներով կոչերով, կարգախոսներով պոստքարդեր, որոնք կտարածվեն մասնակից երիտասարդների համայնքներում և մարզերում՝ այս կերպ գաղափարի շուրջ ներգրավելով մեծ թվով երիտասարդների:

Ռիսկերի գնահատում

Հնարավոր ռիսկեր	Ռիսկի առաջացման հավանականություն	Ռիսկի հաղթահարման միջոցառումներ
Ծրագրի դասընթացի օրակարգում ներառված թեմաների հավանական բարդությունը	Թույլ	Ծրագրի փորձագիտական թիմը տիրապետում է թեմաների ներկայացման ոչ ֆորմալ մեթոդաբանության, ինչի գործադրման արդյունքում սույն ռիսկն ամբողջությամբ չեզոքացվելու է:
Ծրագրի ավարտից հետո համայնքներում մասնակիցների կողմից սեփական նախաձեռնությունների իրականացման հետ կապված դժվարություններ	Թույլ	Ծրագրի ղեկավար կազմը և փորձագիտական թիմը մասնակիցներին կուղղորդի և կհամակարգի վերջիններիս աշխատանքը տեղական նախաձեռնությունների իրականացման փուլում:

Ծրագրի աշխատակազմը

Հ/Հ	Անուն, ազգանուն	Դերը/պատասխանատվության շրջանակը ծրագրում	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1.	Ռուզաննա Մանյան	Ծրագրի ղեկավար: Ծրագրի ղեկավարը պատասխանատու է լինելու դասընթացի, ֆորումի, համայնքային միջոցառման տեխնիկական, տեսական, ֆինանսական հարցերի իրականացման, համայնքային միջոցառումների համակարգման, ծրագրի լուսաբանման, գնահատման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար:	Ռուզաննան համարվում է կազմակերպության ծրագրերի ղեկավարը, ունի աշխատանքային 12 տարվա փորձ՝ ղեկավարում է տեղական և միջազգային ծրագրեր, երիտասարդական աշխատող է: Ծրագրերում հադես է գալիս նաև որպես բնապահպանական կրթության դասընթացավար:
2.	Սոնա Հովսեփյան	Ծրագրի ղեկավարի օգնական: Ծրագրի ղեկավարը պատասխանատու է լինելու դասընթացի, ֆորումի, համայնքային միջոցառման տեխնիկական հարցերի իրականացման, համայնքային միջոցառումների համակարգման աջակցման, ծրագրի լուսաբանման, բովանդակային հաշվետվության կազմմանն աջակցման համար:	Սոնան համարվում է կազմակերպության հասարակայնության հետ կապերի պատասխանատուն, ինչպես նաև ծրագրերի աշխատակազմում հանդես է գալիս որպես օգնական, ասիստենտ, ֆասիլիտատոր, ՏԻՄ հարցերով փորձագետ:
3.	Կնյազ Սարոյան	Ծրագրի փորձագետ: Ծրագրի փորձագետը պատասխանատու է լինելու դասընթացի իրականացման, համապատասխան թեմաների շուրջ աշխատաժողովների վարման, անցկացման, համայնքային միջոցառումների համար խորհրդատվությունների իրականացման համար	Կնյազը համարվում է կազմակերպության փոխնախագահ և փորձագետ՝ ժողովրդավարության, քաղաքական և քաղաքացիական մասնակցություն, մեդիագրագիտություն, ջատագովություն թեմաներով: Մասնագիտությամբ քաղաքագետ է, վերլուծաբան, դասախոս, երիտասարդական աշխատող, մեդիա փորձագետ, դասընթացավար:
4.	Դանիել Շահումյան	Ծրագրի փորձագետ: Ծրագրի փորձագետը պատասխանատու է լինելու դասընթացի իրականացման, համապատասխան թեմաների շուրջ աշխատաժողովների վարման, անցկացման, համայնքային միջոցառումների համար խորհրդատվությունների իրականացման համար	Դանիելը համարվում է կազմակերպության խորհրդի անդամ և փորձագետ՝ ժողովրդավարության, քաղաքական և քաղաքացիական մասնակցություն, մեդիագրագիտություն թեմաներով: Մասնագիտությամբ քաղաքագետ է, վերլուծաբան, լրագրող, SMM խորհրդատու, մեդիա փորձագետ, պրոդուկտ մենեջեր, դասընթացավար, երիտասարդական աշխատող, ղեկավարում է ACEYD ՀԿ-ը:

5.	Սիրարփի Մանյան	Դասընթացի և ֆորումի ֆասիլիտատոր: Ֆասիլիտատորը պատասխանատու է լինելու դասընթացի և ֆորումի իրականացման ընթացքում ֆասիլիտացիայի կազմակերպման, համայնքային միջոցառումների համար խորհրդատվությունների իրականացման համար:	Սիրարփին համարվում է կազմակերպության նախագահը, ունի 12 տարվա փորձ: Ծրագրերում հանդես է գալիս որպես երիտասարդական աշխատանքի, սոցիալական իրավունքի թեմաներով փորձագետ, ֆասիլիտատոր, երիտասարդական աշխատող: Ինչպես նաև ղեկավարում է տեղական և միջազգային ծրագրեր:
6.	Մարգարիտա Գասպարյան	Հաշվապահ: Ծրագրում պատասխանատու է լինելու ֆինանսական փոխանցումների, պայմանագրերի պատրաստման, ֆինանսական հաշվետվության պատրաստման համար:	Մարգարիտան համարվում է կազմակերպության հաշվապահը: Հանդիսանում է հաշվապահական ընկերության գլխավոր հաշվապահ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ.ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան
/ստորագրություն/
Կ.Տ
02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական հասարակական կազմակերպություն
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ Շիրակի 6/6
բանկ՝ ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ
Հ/Հ220183350010000
ՀՎՀՀ 03313539
Լիազորված անձ՝
Լուսինե Գևորգյան
/ստորագրություն/